ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷԼԵԿՏՐԻԿԱ ԳՌՈՒՊ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/84 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Չափերը: 1900x730x840մմ Կառուցվածքը՝ Հենարանային ոտքեր - 3 հատ; կապակցող մասեր - 4 հատ; փայտաձողեր - 23 հատ; ներկառուցված տարր - 6 հատ: Արտաքին տեսքը՝ համաձայն նկարի: Նստարանի շրջանակը բաղկացած է 5 մմ հաստությամբ թիթեղից, պատրաստված երեք հենարանային կոր ոտքերից, որոնք փոխկապակցված են 20x40x2 մմ չափերով մետաղական պրոֆիլից պատրաստված չորս կապերով: Կոր հենարանային ոտքերը թուջե ձուլվածքից (ՀԿ-12 մակնիշի), ամրացված են լրացուցիչ հենարաններով, որոնք նույնպես պատրաստված են մետաղական պրոֆիլից՝ 20x40x2 մմ չափերով: Նստարանի փայտաձողերը պատրաստված են հաճարե փայտից՝ 35x50 մմ չափերով և մինչև 12% խոնավությամբ: Փայտաձողերը բոլորը մշակված և հարթեցված են, եզրերը կլորացված են, կլորացման շառավիղը առնվազն 3 մմ: Մշակված մակերեսները ծածկված են մգեցված և անգույն լաքով: Փայտաձողերի միացումները հեղույսային /բոլտ/ Ներկառուցված տարրերը պատրաստված են 26,8 մմ տրամագծով մետաղական կլոր խողովակից և ունեն 300 մմ ընդհանուր երկարություն: Վերին ծայրին եռակցվում է 5x50x130 մմ 11 մմ տրամագծով երկու անցք ունեցող մետաղական թիթեղ, իսկ ստորին ծայրին՝ բետոնապատման համար 5x50x100 մմ թիթեղ: Մետաղից պատրաստված բոլոր տարրերը պետք է մշակվեն, յուղազրկվեն և ներկվեն պոլիմերային փոշի ներկով RAL 7012 (մոխրագույն) կամ համարժեքով: Բոլոր ամրակները ցինկապատ են: Տեղադրումը կատարվում է DIN 603 M6x50 և DIN 912 M10x25 ամրակներով՝ ներկառուցված տարրերի բետոնապատմամբ: Տեղադրումը կատարվում է վաճառողի կողմից: Երաշխիքային ժամկետ առնվազն 365 օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

"ЭЛЕКТРИКА ГРУП" ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/84 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	